

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

ՇԱՀԱՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԱՎԱԳՅԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
(ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)
Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Արտակ Ստեփանյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Հին Հունական Օլիմպիական խաղեր.....	6
Գլուխ 2. Ժամանակակից Օլիմպիական խաղեր. ՄՕԿ.....	12
Գլուխ 3. Հայ մարզիկների մասնակցությունը Օլիմպիական խաղերին.....	17
Եզրակացություններ	23
Օգտագործված գրականության ցանկ.....	24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը: Ֆիզիկական կուլտուրան ունի զարգացման վաղ արմատներ: Դեռևս դարեր առաջ մարդիկ հասկացել են, որ այն է մարմնի հոգևոր և ֆիզիկական ներդաշնակության, կատարելության հավաստիքը, քանզի դրա միջոցով առողջության ամրապնդման և շարժողական ընդունակությունների մշակման հետ միասին դաստիարակվում են նաև մարդու բնավորությունն ու վարքագիծը, մշակվում են դժվարությունները հաղթահարելու կարողություններ: Այսօր էլ արդար խաղի, հարգանքի և համագործակցության վրա հիմնված սպորտը դիտվում է որպես ժողովուրդների մերձեցման, խաղաղության և բարեկամության հաստատման ու ամրապնդման միջոց[1]: Վերջինիս զարգացման հիմքը կազմում են հանրային կյանքի նյութական պայմանները, հասարակության ընդհանուր կուլտուրան, գիտական և կրթական մակարդակը: Ֆիզիկական կուլտուրան ընդգրկում է մարդու գործունեության բոլոր կողմերը, այն փոխկապակցված է ժողովրդի սոցիալական, տնտեսական, մշակութային կյանքի բոլոր ոլորտների հետ:

Ֆիզիկական կուլտուրան կրթական հաստատություններում ներկայացված է որպես կրթական ոլորտ, որպես ուսումնական առարկա և աշակերտների անձի ձևավորման կարևորագույն հիմնական բաղադրիչ: Այն նպատակ ունի ապահովել կենսականորեն կարևոր շարժողական կարողությունների և հմտությունների զարգացման անհրաժեշտ մակարդակ, ինչպես նաև տալիս է տեսական գիտելիքներ ֆիզկուլտուրայի և մեծ սպորտի մասին: Լինելով կրթության բաղադրիչի պարտադիր մաս՝ ֆիզիկական կուլտուրան նպաստում է աշակերտների հոգու և մարմնի ներդաշնակությանը՝ նրանց մոտ ձևավորելով այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ առողջությունը, ֆիզիկական և հոգեբանական կարողությունները[2]: Դեռևս 1872 թվականին Ա. Ամիրխանյանը գրել է. «Եթե դպրոցում չկա ֆիզիկական կուլտուրա, ապա նա չի կարող հասնել իր նպատակին: Ֆիզկուլտուրան միայն ներդաշնակ ֆիզիկական և բարոյական դաստիարակության միջոց չէ: Այն նույնքան կարևոր է, որքան հայոց լեզուն և մեթեմատիկան: Եվ պատահական չէ, որ ավելի քան 100 տարի առաջ Սանասարյան վարժարանում շաբաթական

ուսումնական օրակարգում ֆիզկուլտուրայի, մաթեմատիկայի, լեզուների դասերին հատկացված էին հավասարազոր քանակությամբ ժամեր»[3]:

Այսօր ֆիզիկական կուլտուրա դասավանդող ուսուցչի առաջ խնդիր է դրված ոչ միայն ֆիզիկական պատրաստվածության բերել աշակերտներին, այլև նրանց տալ տեսական գիտելիքներ՝ բարձրացնելով նրանց տեղեկացվածության մակարդակը, ինչպես նաև մոտիվացիան: Ըստ ֆիզիկական կուլտուրայի դասավանդման մեթոդական ձեռնարկի, միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների «ֆիզիկական կուլտուրա» առարկայի հիմնական խնդիրներից է նաև ֆիզկուլտուրայի և սպորտի, օլիմպիական խաղերի, անվանի մարզիկների վերաբերյալ գիտելիքների տրամադրումը, որը միտված է ֆիզկուլտուրայի և սպորտի դերի գիտակցման ձևավորմանը անձի առողջության ամրապնդման, ներդաշնակ զարգացման, հետագա աշխատանքային գործունեության նախապատրաստման գործում [4]: Եվս մեկ անգամ ընդգծենք՝ հանրակրթական դպրոցներում ֆիզիկական կուլտուրա առարկայի նպատակը ֆիզիկապես առողջ, համակողմանի զարգացած, առողջ ապրելակերպի կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող քաղաքացի ձևավորելն է: Հենց այս նպատակների իրագործման համար էլ «ֆիզիկական կուլտուրա» առարկայի բազային ուսումնական նյութը բացի «Մարմնամարզություն», «Աթլետիկա», «Մարզախաղեր», «Շարժախաղեր» բաժիններից պարունակում է նաև «Գիտելիքների հիմունքներ» բաժինը:

Հետազոտության նպատակը: Հաշվի առնելով վերոհիշյալ փաստարկները՝ մեր հետազոտական աշխատանքը նպատակ է հետապնդում ոչ միայն դառնալ մի յուրօրինակ ուղեցույց, ձեռնարկ, որն իր մեջ պարունակում է համապարփակ գիտելիքներ օլիմպիական խաղերի ծագման և զարգացման պատմության մասին, այլև հայ մարզիկների մասին օրինակների ընդգծումով լինել մոտիվացիոն շտեմարան դպրոցականների համար: Բացի այդ, մենք ցանկացել ենք մեր կողմից իրականացված սոցիալական հարցումների միջոցով բացահայտել աշակերտների ունեցած տեսական գիտելիքները օլիմպիական խաղերի մասին, որի արդյունքում

կկարողանանք հասկանալ նրանց գիտելիքների թերի կողմերը և ճիշտ ուղու վրա դնել մեր դասավանդման մեթոդիկան:

Հեղազոտության օբյեկտն ու առարկան: Մեր կողմից իրականացված հետազոտության մեջ որպես հետազոտության օբյեկտ մենք ընտրել ենք անտիկ և ժամանակակից Օլիմպիական խաղերը, քանզի դրանք համարվում են ամենից վառ սպորտային միջոցառումները, որոնք դարեր շարունակ մեկ հովանու տակ են հավաքում հազարավոր մարզիկների ողջ աշխարհից, իսկ հետազոտության առարկա՝ տեսական գիտելիքների հաղորդման մեթոդիկան:

Հեղազոտման մեթոդները: Աշխատանքն իրականացնելու ճանապարհին մենք օգտագործել ենք գրական աղբյուրների ուսումնասիրության, վերլուծության, համեմատության և հանրային հարցումների անցկացման մեթոդները:

Հեղազոտության խնդիրները:


1. Բացահայտել դարոցականների շրջանում ընդհանուր տեսական գիտելիքները օլիմպիական խաղերի պատմության, հայ մարզիկների ներգրավվածության մասին:
2. Մշակել տեսական գիտելիքների մատուցման մեթոդիկա:
3. Բարձրացնել տեղեկացվածության մակարդակը՝ տալով համապարփակ գիտելիքներ Օլիմպիական խաղերի ծագման և զարգացման պատմության մասին:
4. Հաջողությունների պատմությունների ներկայացման միջոցով բարձրացնել հետաքրքրությունը դեպի մեծ սպորտ և ֆիզիկական կուլտուրա:
5. Բարձրացնել ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մոտիվացիոն մակարդակը՝ ձևավորելով ճկուն, կողմնորոշվող անհատներ:

ԳԼՈՒԽ 1. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Օլիմպիական խաղերը դարեր շարունակ համարվում են սպորտային ամենից կարևոր և վառ միջոցառումները, քանի որ դրանք մի տանիքի տակ են հավաքում բազում մարզիկների ամբողջ աշխարհից: Նրանց հաղթանակները դառնում են տվյալ պետության այցեքարտը, որն անչափ կարևոր է պետական իմիջի ձևավորման և կայացման հարցում [5]: Օլիմպիական խաղերին մասնակցությունը պատիվ է յուրաքանչյուր երկրի մարզիկի համար [5]: Հետազոտության այս հատվածում մենք անդրադարձել ենք անտիկ Օլիմպիական խաղերի ծագման և զարգացման պատմությանը, որի ուսուցումը անչափ կարևոր է դպրոցական ծրագրում: Սակայն մինչև պատմական հետհայացի կատարումը մենք իրականացրել ենք անանուն առցանց հանրային հարցում հիմնականում դպրոցահասակների շրջանում, որը նպատակ է պարզել վերջիններիս ունեցած գիտելիքները անտիկ Օլիմպիական խաղերի մասին: Հարցման նպատակը նրանց գիտելիքների ստուգումն է, ինչը հնարավորություն կտա հասկանալու՝ ինչ շեշտադրումներ անել, և որ ուղղությամբ պետք տանել ուսուցման ղեկը: Հարցման արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Ստորև ներկայացված գծապատկերներից երևում է՝ մեր հիմնական սեգմենտը եղել են 12-18 տարեկան անձինք, որոնց մեջ գերակշռել են իգական սեռի ներկայացուցիչները, և որոնք ունեն միջնակարգ կրթություն, ինչը հասկանալի է՝ հաշվի առնելով հարցվածների մեծ մասի աշակերտ լինելու հանգամանքը:


Ձեր սեռը:
70 ответов



Գծապատկեր 1.

Ձեր տարիքը:


70 ОТВЕТОВ



Գծապատկեր 2.

Ձեր կարգավիճակը:


68 ОТВЕТОВ



Գծապատկեր 3.

Ձեր կրթությունը

63 ОТВЕТА



Գծապատկեր 4.

Նրանց երկու հարց է տրված եղել՝ երբ և որտեղ են տեղի ունեցել անտիկ Օլիմպիական խաղերը (Գծապատկեր 5, Գծապատկեր 6): Պատասխանները ցույց տվեցին, որ հարցվածների մեծամասնությունը տեղյակ է, որ անտիկ Օլիմպիական խաղերը տեղի են ունեցել Հին Հունաստանում: Կարող ենք փաստել, որ նրանցից շատերը նույնիսկ գիտեին դրանց անցկացման տարեթիվը: Հարցման արդյունքները ևս մեկ անգամ ընդգծում են, որ մեր կողմից մատուցված գիտելիքները հետաքրքրել են աշակերտներին և իսկապես ընկալվել են նրանց կողմից:

են ցանկանում մասնակցել: Քանի որ մրցույթն անցկացվում է Հունաստանի Օլիմպիական Ալտիս բացատում, խաղերը ստացան Օլիմպիական խաղեր անվանումը: Իհարկե այս շարադրանքը ներկայացված է 1-2 դասարանների աշակերտների համար:

Անտիկ կամ ինչպես ընդունված է անվանել Հին Հունական Օլիմպիական խաղերի մասին առաջին հիշատակումներում նշվում է Մ.թ.Ա. 776 թվականը, որն էլ համարվում է Օլիմպիական խաղերի սկիզբը: Ըստ հիշատակումների, Օլիմպիական խաղերին մասնակցելու համար սահմանված էին հատուկ պայմաններ և հատուկ կանոններ: Այդ կանոնների համաձայն, այն մարզիկները, ովքեր ցանկանում էին մասնակցել խաղերին, պարտավոր էին մրցումներից մեկ ամիս առաջ ժամանել Օլիմպիա, ներկայանալ կազմակերպիչներին, մարզվել, նախապատրաստվել մրցույթին: Խաղերի մասնակիցները երդվում էին լինել արդար և ազնիվ: Ըստ վկայությունների, ստրուկներն ու աղքատները իրավունք չունեին մասնակցել Օլիմպիական խաղերին, քանզի այն նախատեսված էր միայն ազնվականների համար: Բացի այդ սկզբնական շրջանում խաղերին կարող էին մասնակցել միայն տղամարդիկ: Կանանց համար անցկացվում էին առանձին մրցումներ, որոնցից մեկին մասնակցել է նաև Հերա աստվածուհին, ում պատվին էլ մրցումները կոչվեցին «Հերիադաներ»: Վերջիններս նույնպես տեղի էին ունենում Օլիմպիայում տղամարդկանց խաղերից հետո սեպտեմբեր ամսին[6]:

Հին Հունական Օլիմպիական խաղերն անցկացվում էին չորս տարին մեկ անգամ, որոնց ընթացքում դադարեցվում էին պատերազմները: Ցավոք սրտի, նույն սկզբունքը չգործեց ժամանակակից Օլիմպիական խաղերի ժամանակ, որի արդյունքում մի քանի խաղ տեղի չունեցավ:

Հին Հունական Օլիմպիական խաղերի ժամանակ կազմակերպվել են մրցումներ հետևյալ մարզաձևերից՝ վազք, հեռացատկ, նիզակի և սկավառակի նետում, հնգամարտ, ըմբշամարտ, բռնցքամարտ, ձիարշավ և այլն: Հետագայում Օլիմպիական խաղերի ծրագրերում ընդգրկվեցին նաև արվեստի, գիտության, գրականության, մշակույթի ներկայացուցիչների մրցումներ: Այդ խաղերում առաջին հաղթողը դարձել է հույն վազորդ Կորեբան: Բացի մրցույթին մասնակցելուց

բանաստեղծները կարդում էին բանաստեղծություններ, իսկ հոետորները գովաբանում էին հաղթողներին: Մրցույթում հաղթողները պարգևատրվում էին ձիթենու ճյուղերից պատրաստված պսակներով: Պարգևատրումը տեղի էր ունենում Օլիմպիայի Զևսի տաճարում: Հաղթողների անունները գրվում էին Օլիմպիական խաղերի չեմպիոնների Պատվո գրքում, իսկ Օլիմպիայի Սուրբ պուրակում՝ Ալտիսում, երբեմն կառուցվում էին առավել հայտնի մարզիկների արձանները:

Անտիկ Օլիմպիական խաղերին մասնակցել են անվանի բազում գիտնականներ, փիլիսոփաներ, որոնց թվում էին Պյութագորասը, Հերոդոտը, Սոկրատեսը, Պլատոնը, Լուկիանոսը, Հիպոկրատը, Ներոն կայսրը և այլք: Հին Հունական Օլիմպիական խաղերին մասնակցել են նաև մարզիկներ Հայաստանից: Նրանցից են Տրդատ Մեծ Արշակունին, ով 256-րդ Օլիմպիական խաղերում հռչակվել է ըմբշամարտիկների մրցումների չեմպիոն, և Վարազդատ Արշակունին, որը 291-րդ խաղերում դարձել է բռնցքամարտի մրցումների հաղթող: Պատմական որոշ աղբյուրներ նշում են, որ հնարավոր է, որ Օլիմպիական խաղերին մասնակցել են նաև հայ թագավորներ Արտավազդ 2-րդը, Արտավազդ 3-րդը և այլք:

Մ.Թ.Ա. 2-րդ դարից սկսած Հին Հունական Օլիմպիական խաղերի հանդեպ հետաքրքրությունը մարեց, և Մ.Թ.Ա. 394 թվականին կայսր Թեոդոսիոսի հրամանագրով համարվեցին հեթանոսական ծեսեր և արգելվեցին: Այսպիսով կարող ենք ասել, որ առաջին անտիկ Օլիմպիական խաղերը տեղի են ունեցել Մ.Թ.Ա. 776 թվականին, իսկ վերջինը՝ Մ.Թ.Ա. 394 թվականին:

Ուսումնական նյութի մատուցման մեթոդները:

Ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ տեսական գիտելիքները մեր կողմից հաղորդվում են հետևյալ մեթոդներով՝

- Զրույցի և պատմելու միջոցով նյութի մատուցման մեթոդ, ինչը մասնավորապես տարրական դասարաններում արդյունավետ է: Հետաքրքիր դրվագներով, միջակայքով, հերոսական պատումներով ներկայացվող պատմությունները հեշտ ընկալվում են աշակերտների կողմից՝ ազատելով ինքնուրույն կարդալու ծանրաբեռնվածությունից:

- Ուսումնական նյութի բացատրման մեթոդ: Այս մեթոդը ուղեկցվում է սահիկաշարերի ներկայացմամբ, որը հավելյալ գրավչություն է հաղորդում մատուցվող նյութին, ինչն այն դարձնում է առավել հեշտ ընկալելի և հիշվող:

- Ուսումնական նյութի մատուցում թեմատիկ տեսաֆիլմերի, մուլտֆիլմերի, անիմացիոն հոլովակների և համացանցային մեմերի միջոցով: Տեսողական բաղադրիչի ավելացումը մատուցվող նյութին այն կրկնակի հետաքրքիր է դարձնում:

- Հարց ու պատասխանի ձևով ամփոփման մեթոդ: Ուսումնական նյութի յուրաքանչյուր մատուցումից հետո այն ամփոփվում է հարց ու պատասխանի ձևով, ինչն ամրապնդում է մատուցված գիտելիքը:


ԳԼՈՒԽ 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ՄՕԿ

Հին Հունական Օլիմպիական խաղերի ծագման, անցկացման վերաբերյալ տեղեկությունները հետաքրքրել են շատ անվանի գիտնականների, պատմաբանների: Նրանցից մեկն էլ ֆրանսիացի գիտնական, հասարակական գործիչ Պիեռ դե Կուբերտենն էր, ով Հին Հունական Օլիմպիական խաղերը վերականգնելու և ժամանակակից Օլիմպիական խաղեր կազմակերպելու հարցում մեծ դեր է ունեցել: Նա 1894 թվականին Սորբոնի համալսարանում հրավիրում է միջազգային Օլիմպիական հիմնադիր մարզական կոնգրես՝ միջազգային օլիմպիական կոմիտե ստեղծելու համար: Կոնգրեսը որոշում կայացրեց օլիմպիական խաղերը վերականգնելու, միջազգային օլիմպիական կոմիտե ստեղծելու (ՄՕԿ) և ժամանակակից առաջին Օլիմպիական խաղերը Հունաստանում անցկացնելու մասին: Եվ այսպես 1894 թվականին ստեղծվեց ՄՕԿ-ը, որի կազմի մեջ մտնում էր 12 պետություն՝ 14 մասնակիցներով [7]: Հետագոտության այս գլխում մենք ուսումնասիրել ենք ժամանակակից Օլիմպիական խաղերի ձևավորման պատմությունը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս հատվածում, մենք իրականացրել ենք հանրային հարցում՝ պարզելու աշակերտների գիտելիքները ժամանակակից Օլիմպիական խաղերի մասին:

Հարցվածների մեծ մասը գիտեր՝ ինչ է ՄՕԿ-ը, և ով է հիմնադրել այն: Վերջիններս տեղյակ էին նաև առաջին ժամանակակից Օլիմպիական խաղերի կայացման տարեթվի մասին (Գծապատկեր 7, Գծապատկեր 8, Գծապատկեր 9):

Ի՞նչ է ՄՕԿ-ը:
69 ответов


Копировать



Գծապատկեր 7.

ՈՒՄ Նախաձեռնությամբ է ստեղծել ՄՕԿ-ը:


69 ответов



Գծապատկեր 8.

Ե՛րբ են տեղի ունեցել առաջին ժամանակակից օլիմպիական խաղերը:

70 ответов



Գծապատկեր 9.


Այսպիսով՝ ՄՕԿ-ի ստեղծումից հետո դրա առաջին նախագահ ընտրվեց հույն հայտնի բանաստեղծ Դեմիտրիոս Վիկելասը, իսկ գլխավոր քարտուղար՝ Պիեռ դե Կուբերտենը:

ՄՕԿ-ը որոշեց, որ ժամանակակից առաջին Օլիմպիական խաղը պետք է տեղի ունենա 1896 թվականին Հունաստանի Աթենք քաղաքում, ի պատիվ հին Հունական Օլիմպիական խաղերի: Եվ պահպանելով հին Հունական խաղերից եկած ավանդույթը՝ խաղերը պետք է տեղի ունենային 4 տարին մեկ անգամ: Եվ այսպես՝ 1502 տարի ընդմիջումից հետո Օլիմպիական խաղերը վերականգնվեցին, ֆրանսիացի գիտական հասարակական գործիչ Պիեռ դե Կուբերտենի մեծ ջանքերի շնորհիվ, և այդ խաղերը կոչվեցին ժամանակակից Օլիմպիական խաղեր: ՄՕԿ-ի որոշման համաձայն, 1896 թվականին տեղի ունեցավ առաջին ժամանակակից Օլիմպիական խաղերը, որին մասնակցեցին 13 երկրների մարզիկներ 9 մարզաձևերից: Առաջին Օլիմպիական չեմպիոնը դարձավ ամերիկացի եռացատկորդ Ջեյմս Քոնոլինը: Ավանդության համաձայն, այս խաղերին մասնակցում էին


միայն տղամարդիկ: Կանայք մասնակցեցին 2-րդ Օլիմպիական խաղերից սկսած, որը տեղի ունեցավ Ֆրանսիայում 1900 թվականին Ֆրանսիայում:

Սկսած 1896 թվականից պարբերաբար 4 տարին մեկ անգամ անցկացվում են ամառային Օլիմպիական խաղեր: Եթե հին Հունական Օլիմպիական խաղերի ժամանակ պատերազմները դադարեցվում էին, ապա, ցավոք սրտի, այդ սկզբունքը չգործեց ժամանակակից Օլիմպիական խաղերի ժամանակ: Արդյունքում չանցկացվեցին 1916 թվականի 6-րդ, 1940 թվականի 12-րդ, 1944 թվականի 13-րդ ամառային Օլիմպիական խաղերը առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների պատճառով: Տեղի չեն ունեցել նաև 1940 և 1944 թվականների ձմեռային Օլիմպիական խաղերը: Վերջիններս հայտնի են որպես «Սպիտակ Օլիմպիադաներ» կամ «Օլիմպիական խաղեր առանց չեմպիոնների»: Ինչպես հայտնի է, հետաձգվեց նաև 32-րդ ամառային Օլիմպիական խաղերը կորոնավիրուսային համավարակի պատճառով՝ 2020 թվականի խաղերը անցկացնելով 2021 թվականին, սակայն պահպանելով իր անունը՝ «Տոկիո 2020»: Այս մասին ևս կար հարց մեր կողմից իրականացված հարցման մեջ: Հարցվածների մեծ մասը տեղյակ էր՝ ինչու տեղի չեն ունեցել 32-րդ Օլիմպիական խաղերը (Գծապատկեր 10):

Ինչու՞ հետաձգվեցին 2020 թվականի ամառային օլիմպիական խաղերը:

 Копировать

70 ответов



Գծապատկեր 10.

Մինչև 1924 թվականը տեղի էին ունենում միայն ամառային Օլիմպիական խաղեր: 1923 թվականին ՄՕԿ-ը 8-րդ Օլիմպիական կոնգրեսում որոշում ընդունեց ձմեռային Օլիմպիական խաղեր կազմակերպելու և Շամոնի քաղաքում անցկացնելու վերաբերյալ: Եվ առաջին ձմեռային Օլիմպիական խաղերը տեղի

ունեցան 1924-ին Ֆրանսիայի Շամոնի քաղաքում: Դրանք նույնպես անցկացվում էին չորս տարին մեկ անգամ: Հետաքրքիր է իմանալ, որ եթե մինչև 1994 թվականը ձմեռային և ամառային Օլիմպիական խաղերը անցկացվում էին միևնույն տարում, ամառային խաղերը՝ ամռան և աշնան ամիսներին, ձմեռայինը՝ ձմռան, ապա այժմ ՄՕԿ-ի որոշմամբ դրանք հաջորդում են իրար 2 տարվա տարբերությամբ:

Բացի Օլիմպիական խաղերի կազմակերպումից, ՄՕԿ-ը մշակեց նաև Օլիմպիական շարժման գաղափարները, հիմնադրույթները:

Ժամանակի ընթացքում Օլիմպիական արարողակարգերը ենթարկվեցին փոփոխությունների և ընդունվեցին Օլիմպիական խորհրդանիշները:

Օլիմպիական շարժման և Օլիմպիական խաղերի հիմնական նպատակները, խաղերի կազմակերպման և անցկացման օրենքներն ու կանոնները սահմանվում են ՄՕԿ-ի կողմից ընդունված հրովարտակով:

Ներկայումս ՄՕԿ-ի անդամ են 205 պետության ազգային Օլիմպիական կոմիտեներ (ԱՕԿ):

Օլիմպիական խաղերը տեղի են ունենում որոշակի արարողակարգով.

- Օլիմպիական խաղերի բացում և փակում
- Օրհներգի հնչեցում և դրոշի բարձրացում
- Օլիմպիական կրակի(ջահի) փոխանցում, վառում և մարում
- Մարզիկների պարգևատրում

Օլիմպիական խորհրդանիշներն են.

-Օլիմպիական դրոշը, Օլիմպիական օրհներգը, Օլիմպիական էմբլեման, Օլիմպիական խաղերի նշանաբանը, Օլիմպիական ջահը:

Օլիմպիական *դրոշը* սպիտակ կտավ է, որի կենտրոնում պատկերված է Օլիմպիական խորհրդանիշը՝ միահյուսված հինգ օղակները հինգ գույներով՝ կապույտ, սև, կարմիր օղակները տեղադրված են վերևում, իսկ դեղինը, կանաչը՝ ներքևում: Ամեն գույնը խորհրդանշում է մեկ աշխարհամաս. կապույտը՝ Եվրոպան, սևը՝ Աֆրիկան, կարմիրը՝ Ամերիկան, դեղինը՝ Ասիան, կանաչը՝ Ավստրալիան: Միահյուսված օղակները ցույց են տալիս հինգ աշխարհամասերի միությունը և Օլիմպիական խաղերին աշխարհի բոլոր մարզիկների միասնությունը:

Օլիմպիական *օրհներգը* հաստատվել է ՄՕԿ-ի կողմից 55-րդ նստաշրջանում՝ Տոկիոյում:

Օլիմպիական *էմբլեման* մի կոմպոզիցիա է, որտեղ Օլիմպիական օղակները կապված են այլ երկրների տարբերանշանների հետ: Ամեն մի երկիր, որտեղ պետք է անցկացվի հերթական Օլիմպիական խաղերը, ինքն է ընտրում Օլիմպիական էմբլեման, որը հաստատվում է ՄՕԿ-ի կողմից:

Օլիմպիական խաղերի *նշանաբանն* է. «Արագ», «Ուժեղ», «Բարձր»: Կարգախոսը կամ նշանաբանը հնչեցվում է Օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ:

Օլիմպիական *ջահը* բերվում է Աթենքից այն երկիր, որտեղ պետք է տեղի ունենա հերթական Օլիմպիական խաղը:

Բացման արարողության ժամանակ հանդիսավոր կերպով վառվում է Օլիմպիական կրակը: Ողջ խաղերի ընթացքում կրակը չի մարում: Փակման արարողության ժամանակ Օլիմպիական կրակը հանդիսավոր կերպով մարվում է, որն ազդարարում է Օլիմպիական խաղերի ավարտը: Օլիմպիական խաղեր անցկացնող բոլոր երկրներն էլ խաղերի բացման և փակման արարողակարգերը ձգտում են այնպես անցկացնել, որ դրանք լինեն իսկական մարզական, մշակութային, գեղեցիկ և հիշարժան ներկայացումներ[8]:

Ժամանակակից Օլիմպիական խաղերի մասին նյութը մատուցելիս մենք կիրառում ենք մի շարք մեթոդներ, որոնք ավելի շատ նախատեսված են միջին դասարանների աշակերտների համար.


- Մասնագիտական գրականության տրամադրում:
- Թեմատիկ պաստառների, ֆիլմերի, հաղորդաշարերի ցուցադրում:
- Նյութի մատուցում գործնական պարապմունքների միջոցով խմբային, անհատական, հոսքային մեթոդների կիրառմամբ:
- Քննական բնույթ կրող թղթային և առցանց հարցումների անցկացում:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Ինչպես արդեն նշեցինք, առաջին Օլիմպիական խաղերը տեղի են ունեցել 1896 թվականին Աթենք քաղաքում: 1896 թվականից մինչև 1952 թվական ընկած ժամանակահատվածում հայ մարզիկները չէին մասնակցում Օլիմպիական խաղերին, քանզի Հայաստանը ԽՍՀՄ անդամ էր, որը ՄՕԿ-ի անդամ չէր: ՄՕԿ-ի անդամ դառնալուց հետո միայն ԽՍՀՄ-ը մասնակցեց 1952 թվականին Հելսինկիում անցկացվող 15-րդ ամառային Օլիմպիական խաղերին: Այդ ժամանակ ԽՍՀՄ-ի պատվիրակության կազմում առաջին անգամ մասնակցեցին Հայաստանի երկու մարզիկներ՝ Հրանտ Շահինյանը և Իգոր Նովիկովը: Բացառիկ էր 1956 թվականի 16-րդ Օլիմպիական խաղերը, քանի որ հայ մարզիկ Ալբերտ Ազարյանը նվաճեց երեք ոսկե մեդալ:

Հետազոտության այս հատվածում մենք անդրադարձել ենք հայ մի քանի անվանի մարզիկների կենսագրությանն ու հաջողության պատմություններին: Սակայն մինչև այդ վերլուծենք մեր հարցման արդյունքները:


Ո՞վ է հայ առաջին օլիմպիական չեմպիոնը:
70 ОТВЕТОВ



Գծապատկեր 11.

Նշվածներից ո՞վ է եղել օլիմպիական չեմպիոն:


69 ответов



Գծապատկեր 12.

Ո՞ր սպորտաձևում է հանդես եկել օլիմպիական չեմպիոն Ալբերտ Ազարյանը:


70 ответов



Գծապատկեր 13.

Ո՞ր թվականին են առաջին անգամ հայ մարզիկները մասնակցել օլիմպիական խաղերին:

70 ответов



Գծապատկեր 14.

Հարցման գրեթե բոլոր մասնակիցները հիմնականում գիտեին՝ հայ որ մարզիկը երբ է մասնակցել Օլիմպիական խաղերին:

Հրանտ Շահինյան

Հրանտ Շահինյանը ծնվել է 1923 թվականին Լոռու մարզի Գյուլագարակ գյուղում: 1930 թվականին նրա ընտանիքը տեղափոխվել է Երևան, և նա սկսել է զբաղվել մարմնամարզությամբ:

1952 թվականին Հրանտ Շահինյանը դառնում է ԽՍՀՄ բացարձակ չեմպիոն: 1952 թվականին մասնակցում է Հելսինկիում անցկացվող 15-րդ ամառային Օլիմպիական խաղերին: Նա նվաճում է երկու ոսկե և երկու արծաթե մեդալ: 1954 թվականին մասնակցել է մարմնամարզության առաջնությանը, կատարել է այնպիսի պտույտներ և շարժումների համակցություններ, որ մինչև այդ չի կատարել ոչ մի մարմնամարզիկ: Այդ ամենի շնորհիվ նա դարձել է աշխարհի չեմպիոն:

Հրանտ Շահինյանը եղել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ(1951), ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ(1961), ԽՍՀՄ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ(1966), ԽՍՀՄ յոթակի չեմպիոն: Հարկ ենք համարում նշել նաև, որ միջազգային կանոնադրությամբ, Հրանտ Շահինյանի արած շարժումները կոչվել են «Շահինյանական»: ՄՕԿ-ը Շահինյանին արժանացրել է Միջազգային օլիմպիական կոմիտեի «Արդարացի խաղի ասպետ» կոչմանը: Հայաստանում նրան անվանում էին «Հայկական սպորտի նահապետ»: Հրանտ Շահինյանը Երևանում հիմնադրել է մարմնամարզության դպրոց, որտեղ մինչև օրս էլ մարզվում են բազում երեխաներ: Հրանտ Շահինյանը մահացել է Երևանում 1996 թվականին 72 տարեկան հասակում:

Ալբերտ Ազարյան

Ալբերտ Ազարյանը ծնվել է 1929 թվականին: Պատանեկան տարիներին աշխատել է որպես դարբին: Նա շատ է սիրել սպորտը, սկզբում զբաղվել է տարբեր սպորտաձևերով և միայն 1949 թվականից սկսել է զբաղվել մարմնամարզությամբ:

1952 թվականին նա մասնակցել է ԽՍՀՄ առաջնությանը, որի ժամանակ կատարել է մի վարժություն, որը մարմնամարզության միջազգային ֆեդերացիայի հավատարմագրման համաձայն կոչվեց «Ազարյանական խաչ», չնայած ինքը

Ալբերտ Ազարյանը ուրիշ ձևով է մեկնաբանում այդ դժվարին վարժության կատարման դրդապատճառները:

1954 թվականին Ալբերտ Ազարյանը մասնակցել է մարմնմարզության աշխարհի առաջնությանը, որտեղ օղակների վրա վարժություններում դարձել է աշխարհի չեմպիոն:

1956 թվականին Մելբուռնի 16-րդ Օլիմպիական խաղերում նվաճել է երկու ոսկե մեդալ:

1960 թվականին 17-րդ Օլիմպիական խաղերին դարձյալ նվաճել է ոսկե մեդալ՝ կրկին դառնալով Օլիմպիական չեմպիոն:

Մարզաշխարհում նրան անվանում են «Օղակների արքա»: Ալբերտ Ազարյանը Երևանում բացել է իր մարզական դպրոցը:

Նրա որդին նույնպես դարձել է Օլիմպիական չեմպիոն 1980 թվականին Մոսկվայում:

Իգոր Նովիկով

Իգոր Նովիկովը ծնվել է 1929 թվականին Մոսկվայի մարզի Դրեզնա քաղաքում: 1934 թվականից տեղափոխվել է Երևան, որից հետո ավարտել է Երևանի Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Նա եղել է հնգամարտիկ: Ժամանակակից հնգամարտի մեջ մտնում են լողը, հրաձգումը, վազքը, սուսերամարտը, ձիասպորտը:

1951 թվականին մասնակցել է Երևանում անցկացվող ԽՍՀՄ բազմամարտի առաջնությանը և դարձել է ԽՍՀՄ չեմպիոն և հրավիրվել է ժամանակակից հնգամարտի հավաքականի թիմ:

1952թ.-ին մասնակցել է Հելսինկիի Օլիմպիական խաղերին:

1956թ.-ին մասնակցել է Մելբուռնի Օլիմպիական խաղերին՝ դառնալով Օլիմպիական չեմպիոն:

1960թ.-ին մասնակցել է Հռոմի Օլիմպիական խաղերին և նվաճել արծաթե մեդալ:

1964թ.-ին մասնակցել է Տոկիոյի Օլիմպիական խաղերին՝ նվաճելով մեկ ոսկե և մեկ արծաթե մեդալ:

Նովիկովը իր մասին ասել է. «Ես հայ ժողովրդի ռուս զավակն եմ»: Հետագայում Նովիկովը Երևանում հիմնադրել է ժամանակակից հնգամարտի դպրոց, որն այսօր չկա:

Նովիկովը մահացել է 2007 թվականին և թաղվել Ռուսաստանում:

Վլադիմիր Ենգիբարյան

Վլադիմիր Ենգիբարյան հայ անվանի բռնցքամարտիկ է, ով ծնվել է 1932 թվականին Երևանում:

1951 թվականին Կիևում անցկացված մրցաշարում դառնում է հաղթող և ընդգրկվում ԽՍՀՄ հավաքականի կազմում:

1953 թ.-ն դառնում է ԽՍՀՄ այնուիետև Եվրոպայի չեմպիոն:

1956 թ.-ին մասնակցել է Մելբուռնի Օլիմպիական խաղերին և դարձել չեմպիոն:

1959 թ.-ին հիմնադրել է Երևանի պատանի բռնցքամարտիկների հանրապետական դպրոցը, որի անփոփոխ տնօրենն էր մինչև 1995-ը: Այնուիետև տեղափոխվել է ԱՄՆ:

Վ. Ենգիբարյանը մահացել է 2013 թվականին 80 տարեկան հասակում:

Մարզիկի մասին Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, փառաբանված մարզիկ Լասլո Պապն ասել է. «Չնայած Վլադիմիր Ենգիբարյանը մեկ անգամ է դարձել Օլիմպիական չեմպիոն, սակայն ինձ համար նա մնում է որպես բռնցքամարտի տաղանդի օրինակ»: Վերջինիս մարտերն այնքան գեղեցիկ էին, որ նրան անվանում էին «մեծ ռինգի ասպետ»:

Օլիմպիական խաղերի չեմպիոններ են դարձել նաև Յուրի Վարդանյանը, Օգսեն Միրզոյանը, Իսրայել Միլիտոյանը, Լևոն Զուլֆալակյանը, Մնացական Իսկանդարյանը, Ֆահինա Մելնիկը, Հրաչյա Պետիկյանը և այլք:

Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր են դարձել Էդուարդ Միքայելյանը, Վարդան Միլիտոյանը, Սիլվա Էմիրզյանը, Յուրա Սարգսյանը, իսկ բրոնզե

մեդալակիր՝ Արկադի Անդրեասյանը, Դավիթ Համբարձումյանը, Տիգրան Մարտիրոսյանը, Ռոման Ամոյանը և այլք[9]:

ՀԱՕԿ

Երբ փլուզվեց ԽՍՀՄ-ը, լուծարվեց նաև ԽՍՀՄ-ի Օլիմպիական կոմիտեն: Եվ որպեսզի մեր մարզիկները կարողանային մասնակցել Օլիմպիական խաղերին, անհրաժեշտ էր ստեղծել անկախ Հայաստանի ազգային Օլիմպիական կոմիտե: 1990 թվականին Երևանում կայացավ ՀՀ Ազգային օլիմպիական շարժման հիմնադիր համագումարը, որը որոշեց ստեղծել Հայաստանի Ազգային Օլիմպիական կոմիտե: Հաստատվեց ՀԱՕԿ-ի կազմը՝ 143 մարդ, ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեն՝ 27 մարդ: ՀԱՕԿ-ը ՄՕԿ-ի կողմից 1992 թվականին հաստատվեց Աշխարհի և Եվրոպայի ազգային Օլիմպիական կոմիտեների անդամ: 1992 թվականին 25-րդ ամառային Օլիմպիական խաղերի բացման ժամանակ Բարսելոնա քաղաքում առաջին անգամ դրոշակակիրների շարքում ծածանվում էր Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, որը տանում էր հրաձիգ Հրաչյա Պետիկյանը:

1993 թվականին ՀԱՕԿ-ը դարձավ ՄՕԿ-ի լիիրավ անդամ, որը հաստատեց վերջինիս խորհրդանշանը: Այնուհետև 1994 թվականի փետրվարի 12-17-ը ընկած ժամանակահատվածում Նորվեգիայի Լիլիհամեր քաղաքում կայացած 17-րդ ձմեռային Օլիմպիական խաղերին առաջին անգամ բարձրացվեց ՀՀ պետական դրոշը՝ ՀՀ պետական օրհներգի հնչյունների ներքո:

ՀԱՕԿ-ը ունի իր կանոնադրությունը, որտեղ նշված են դրա հիմնական նպատակներն ու խնդիրները: ՀԱՕԿ-ի նպատակներն են՝

- Օլիմպիական խաղերին հայ մարզիկների նախապատրաստումը
- Մարզական աշխատանքների բարելավումը
- Մարզական ֆեդերացիաների գործունեության աշխուժացումը
- Օլիմպիական շարժման գաղափարների պրոպագանդումը

ՀԱՕԿ-ի խնդիրներն են՝

- Զարգացնել Օլիմպիական շարժումը
- Աջակցել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը

- Պայքարել սպորտում ռասսայական և կրոնական խտրականացման դեմ
- Պրոպագանդել Օլիմպիական գաղափարները
- Ուսումնասիրել և մեզ մոտ կիրառել արտասահմանյան երկրների առաջարկած փորձը և այլն:

ՀԱՕԿ-ի նախաձեռնությամբ սկսած 1995 թվականից յուրաքանչյուր տարի ընտրվում է հանրապետության լավագույն մարզիկ: Ներկայումս ՀԱՕԿ-ի նախագահը Գագիկ Ծառուկյանն է[10]:

Հայ մարզիկների մասին պատմությունների ներկայացման ընդգրկումը դպրոցական ծրագրերում անչափ կարևոր է, քանի որ նրանց հաջողությունների պատմությունները կարող են դրական ազդեցություն ունենալ աշակերտների վրա, մոտիվացնել նրանց, բարձրացնել սպորտով զբաղվելու ցանկությունը: Բացի պատմելու, ներկայացնելու մեթոդներից խրախուսելի կլինի դպրոցի ղեկավարության կողմից մարզիկների հետ հանդիպումների պարբերական կազմակերպումը, որի շրջանակներում վերջիններս կկիսվեն իրենց փորձով, կձանոթացնեն անցած ուղուն և կտան խորհուրդներ: Հարց ու պատասխանի սկզբունքով անցկացվող հանդիպումները իհարկե կտան իրենց արգասավոր պտուղները:

ԵՇՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ֆիզիկական կուլտուրան մարդու առողջ ապրելակերպի և ֆիզիկական կատարելագործման համար հասարակության կողմից ստեղծված և օգտագործվող հոգևոր ու նյութական արժեքների ամբողջություն է, որը նպաստում է բնակչության առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը, ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն սերնդի ձևավորմանը:

2. Բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովումը կատարվում է ուսումնական բոլոր հաստատություններում ուսումնառության ողջ ընթացքում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պարտադիր դասավանդման միջոցով:

3. Ֆիզիկական կուլտուրա դասավանդող ուսուցչի առջև խնդիր է դրված տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ապահովել մարմնի և հոգու ֆիզիկական դաստիարակություն՝ կրթելով հայրենիքի պաշտպանությանը պատրաստ սերունդ, աշակերտների շրջանում ամրապնդելով արդար խաղի գաղափարը, մրցակցի հանդեպ հարգանքը, օլիմպիզմի գաղափարները, ֆիզիկական և բարոյական կոպտության դեմ պայքարը:

4.Ֆիզիկական կուլտուրայի հանդեպ սիրո բարձրացման կարևորությունը կրկնապատկվում է մասնավորապես անվտանգության սպառնալիք ունեցող երկրներում, երբ կա երիտասարդների շրջանում ֆիզիկական պատրաստվածությունը, տոկոսությունը, ճարակությունը, արագ կողմնորոշվելու ունակությունները բարելավելու խնդիր: Այս ճանապարհին որքան կարևոր է ֆիզիկական վարժանքների իրականացումը, նույնքան էլ տեսական գիտելիքների տրամադրումը՝ օլիմպիական խաղերի ծագման և զարգացման, հայ մարզիկների գործունեության մասին:

5. Մեր կողմից իրականացված հարցումները ցույց տվեցին, որ աշակերտների շրջանում կա հետաքրքրություն դեպի Օլիմպիական խաղեր: Մեր խնդիրն է մեծացնել այդ հետաքրքրության շրջանակը՝ դառնալով մոտիվացիա նրանց համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=67146>
2. Հ., Սարգսյան, Լ., Հովհաննիսյան, Ֆիզիկական դաստիարակության արտադասարանական աշխատանքների կազմակերպման ձևերը դպրոցում, Երևան, էջ 234:
3. Վ.Բ. Առաքելյան, Ֆ.Գ. Ղազարյան, Յու. Գ. Գրիգորյան, Հ.Ս. Մինասյան, Ա.Ա. Հարությունյան, Ֆիզիկական Կուլտուրա, Ուսուցչի ձեռնարկ 1-4 դասարաններ, 2008 թ., Երևան, էջ 5:
4. Մեիրաբյան Ա. Ռ., Ֆիզիկական կուլտուրան դպրոցում, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2005թ., 40 էջ:
5. Porter P. The Economic Impact of the Olympic Games: Ex Ante Predictions and Ex Poste Reality, Journal of Sport Management, 2008, 22(4), pp. 470–486.
6. В. Л. Штейнбах, Олимпиад, Большая олимпийская энциклопедия, М.: Олимпия Пресс, 2006.
7. Нуреев Р.М., Маркин Е.В. Издержки и выгоды Олимпийских игр // Общественные науки и современность. 2010. 1. С. 88–104.
8. Հ.Ա. Մինասյան, Հ.Հ. Գաբրիելյան, Ֆիզիկական կուլտուրա «Գիտելիքների հիմունքներ» 1-12-րդ դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2011թ., էջ 127:
9. Գ. Ծառուկյան, Վ. Առաքելյան, Ֆ. Ղազարյան, Յու. Գրիգորյան, «Ֆիզիկական կուլտուրա» 4-րդ դասարան, Երևան, 2011 թ., էջ 127: